ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

Ե Ր Ե Վ Ա Ն - 2023

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի կողմից 2022 թվականին կատարված հիմնական աշխատանքների վերաբերյալ

2022 թվականի ընթացքում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) աշխատանքային գործունեության հիմքում դրված էին ՀՀ ջրային օրենսգրքի, ջրի ազգային ծրագրի և ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների, ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի մասին ՀՀ օրենքները, ինչպես նաև ՀՀ կառավարության ջրային ոլորտի բարեփոխումների մասով ընդունված որոշումները, ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումները, որոնցով հաստատված են համակարգի հիմնական ծրագրային դրույթները և ուղղությունները:

2022 թվականին Կոմիտեի կողմից ապահովվել է ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ որոշման 1 հավելվածի ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն բաժնի 77-88-րդ կետերի պահանջները:

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են աշխատանքները՝ ջրամատակարարման տևողության ավելացման, ջրի որակի բարելավման, ինստիտուցիոնալ բարեփոխումների խորացման, վարձակալության պայմանագրի վերահսկման, մատակարարված ոռոգման ջրի դիմաց վճարների հավաքագրման մակարդակի բարձրացման, համակարգի ընկերությունների գործունեության արդյունավետության բարձրացման, բյուջետային, վարկային և դրամաշնորհային միջոցների արդյունավետ օգտագործման, ինչպես նաև այլ ուղղություններով: Տարվա ընթացքում մամուլում տեղ են գտել ոլորտին վերաբերող բազմաթիվ հրապարակումներ, իրականացվել են հանրային քննարկումներ և մամուլի ասուլիսներ:

Ջրային տնտեսության ոլորտում ջրային կոմիտեի համակարգմամբ 2022 թվականի ընթացքում կատարվել են հետևյալ հիմնական աշխատանքները.

1. Համաձայն 2016 թվականի նոյեմբերի 21-ին ՀՀ կառավարության՝ ի դեմս ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական Կոմիտեի, «Վեոլիա Օ Ժեներալ դեզ Օ» կոմանդիտային բաժնետիրական ընկերության և «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության միջև ստորագրված վարձակալության պայմանագրի, որն ուժի մեջ է մտել 2017 թվականի հունվարի 1-ից, 2022 թվականին «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից որպես վարձակալական վճար ՀՀ պետական բյուջե մուտքագրվել է 3,197.2 մլն դրամ:

Վերը նշված վարձակալության պայմանագրի և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ին տրամադրված ՆԼՋ 0001 լիցենզիայի համաձայն՝ յուրաքանչյուր տարի նախատեսվում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից բաժանորդներին խմելու ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների, այդ թվում՝ մանրածախ, սակագների վերանայում (ճշգրտում):

2022 թվականի օգոստոսի 8-ին «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն ՀԾԿՀ-ին ներկայացրել էր խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման 2023 թվականի սակագների վերանայման (ճշգրտման) հայտ: ՀԾԿՀ-ն ծառայությունների սակագների հաշվարկներում ներառվող մանրածախ ջրամատակարարման փաստացի ծավալների ճշգրտման նպատակով Ջրային կոմիտեի,

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի և սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ 2022 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ժամանակահատվածում իրականացրել է մոնիթորինգ:

ՀԾԿՀ-ի 2022 թվականի նոյեմբերի 29-ի N 519-Ն որոշմամբ հաստատվել է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից բաժանորդներին խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) մանրածախ ծառայությունների մատուցման 2023 թվականի սակագները, որի համաձայն՝ սոցիալապես անապահով բաժանորդների համար 2023 թվականին սակագինը կմնա անփոփոխ՝ 180 դրամ, իսկ մյուս բաժանորդների համար՝ 208.4**19** դրամ:

ՀՀ կառավարությունը համարժեք սուբսիդավորմամբ կչեզոքացնի սակագնի ավելացումը խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) մանրածախ ծառայություններից բաժանորդների համար: ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի միջոցներից «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ին կտրամադրվի սուբսիդիա՝ յուրաքանչյուր խորանարդ մետրի համար՝ գումարային 208.419 դրամ (ներառյալ ԱԱՀ) սակագնից՝ 7.949 դրամի (ներառյալ ԱԱՀ) չափով, ընդ որում՝ ջրամատակարարման ծառայության համար 177.156 դրամ (ներառյալ ԱԱՀ) սակագնից՝ 6.756 դրամի (ներառյալ ԱԱՀ) չափով և ջրահեռացման ծառայության համար՝ 31.263 դրամ (ներառյալ ԱԱՀ) սակագնից՝ 1.193 դրամի (ներառյալ ԱԱՀ) չափով:

Արդյունքում, 2023 թվականին խմելու ջրի սակագինը սպառողների համար չի թանկանա:

Իրականացվել են ներդրումների պլանավորման և ակտիվների կառավարման գործողությունների ծրագրի մշակման աշխատանքներ: Ուսումնասիրվել և վերլուծվել են Վարձակալի կողմից Ջրային կոմիտե ներկայացված ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվությունները, համապատասխան մասնագիտական առաջարկություններ են ներկայացվել Անկախ տեխնիկական աուդիտորին և Վարձակալին:

Ուսումնասիրվել են ՀՀ պետական ներդրումային ծրագրերով ջրամատակարարման համակարգերում նախատեսվող աշխատանքները և ներկայացվել են առաջարկություններ:

ՀՀ համայնքներում 44 խմելու և 22 ոռոգման ջրամատակարարման ոլորտներում իրականացվող սուբվենցիաների ծրագրային ամբողջական փաթեթները Ջրային կոմիտեն ուսումնասիրել և իր դիրքորոշումն է ներկայացրել շահագրգիռ մարմիններին:

2. Ոռոգման նպատակով ջրառ իրականացնող «Ջրառ» փակ բաժնետիրական ընկերության, ինչպես նաև ոռոգման ջուր մատակարարող 15 ջրօգտագործողների ընկերությունների գործունեությունների արդյունքներով ապահովվել է 90.2 հազ. հա հողատարածքների կայուն ջրամատակարարումը՝ նախորդ տարվա՝ 87.3 հազ. հա համեմատ 2.9 հազ. հեկտարով ավելի:

Դեռևս 2021 թվականից մեկնարկել է ոռոգման համակարգերում SCADA համակարգով հագեցած ջրաչափական սարքավորումների տեղադրման և շահագործման միջոցառումների գործընթացը: 2022 թվականին ՀՀ պետական բյուջեով հատկացված 929.83 մլն դրամ միջոցներով կնքվել են ոռոգման համակարգերը 744 հատ SCADA համակարգով հագեցած ջրաչափական սարքավորումներով կահավորելու աշխատանքների իրականացման պայմանագրերը: Բոլոր աշխատանքներն ամբողջությամբ ավարտվել են, բոլոր սարքավորումներն ի պահ են տրվել կապալառու կազմակերպություններին՝ գարնանը ոռոգման շրջանից առաջ տեղադրելու պայմանով: «Կոտայք», «Արարատ» և «Սյունիք» ՋՕԸ-երի և «Ջրառ» ՓԲԸ-ի սպասարկման տարածքներում ընդհանուր առմամբ տեղադրվել է 771 հատ սարքավորում, որը ավել է

պայմանագրով նախատեսվածից 27 հատով, ինչպես նաև ունեցել ենք 23.0 մլն.դրամ խնայողություն:

ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 21-ի N1134-Ն որոշմամբ 2,468.0 մլն դրամ է հատկացվել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում գտնվող 26 համայնքներում ջրամատակարարման համակարգերի վերակառուցման և կառուցման համար: 1,580.7 մլն դրամի աշխատանքները կատարվել են, մնացած գումարը հետ է վերադարձվել ՀՀ պետական բյուջե աշխատանքները հետագայում իրականացնելու նպատակով:

ՀՀ կառավարության 2022 թվականի օգոստոսի 4-ի N1216-Ն որոշմամբ 122.6 մլն դրամ է հատկացվել Երևանի բուսաբանական այգու տարածքում «Կյանքի պուրակ» նախագծի համար Սարկավագի փողոցի ջրանցքից մինչև Բուսաբանական այգու պարսպի հատվածը ոռոգման ջրագծի կառուցման համար: Աշխատանքների իրականացման նպատակով, որպես կանխավճար տրամադրվել է 43.9 մլն դրամ աշխատանքները 2023 թվականին շարունակելու համար:

ՀՀ կառավարության 2022 թվականի օգոստոսի 11-ի N 1253-Ն որոշմամբ հատկացվել է 198.9 մլն դրամ Գեղարդալճի ինքնահոս համակարգի չկառուցված հատվածի շինարարական աշխատանքներն ավարտելու համար: Աշխատանքներն ավարտվել են սահմանված ժամկետում:

3. ***Համակարգի կազմակերպությունների հիմնական գործունեության վերլուծությունը ցույց է տալիս,*** որ 2022 թվականին իրագործվել են հաստատված ծրագրերը:

Ոռոգման և խմելու ջրամատակարարման ծառայությունների դիմաց հավաքագրումների գծով 2022 թվականին համակարգի գանձումը կազմել է շուրջ 31.96 մլրդ դրամ՝ 2021 թվականի 27.38 մլրդ դրամի փոխարեն կամ ավել է գանձվել 4.58 մլրդ դրամ:

Խմելու ջրի մասով գանձվել է շուրջ 27.3 մլրդ դրամ՝ 2021 թվականի 23.1 մլրդ դրամի դիմաց կամ ավել է գանձվել շուրջ 4.2 մլրդ դրամ, իսկ ոռոգման ոլորտում գանձվել է 4.66 մլրդ դրամ՝ 2021 թվականի 4.29 մլրդ դրամի դիմաց կամ ավել է գանձվել շուրջ 0.37 մլրդ դրամ, որը նաև նախորդ տարիների համեմատ ամենաբարձր ցուցանիշն է:

Հաշվի առնելով 2022 թվականի սակավաջրության և եղանակային անբարենպաստ պայմանները՝ համակարգն ունեցել է էլեկտրաէներգիայի գերածախս: 2022 թվականին էլեկտրաէներգիայի ծախսը կազմել է 238.7 մլն կՎտ ժ կամ 10.7 մլրդ դրամ՝ 2021 թվականի 232.6 մլն կՎտ/ժամի դիմաց՝ 9.3 մլրդ դրամ կամ ավել է ծախսվել 6.1 մլն կՎտ ժ՝ 1.4 մլրդ դրամ: Ոռոգման ոլորտում էլեկտրաէներգիայի ծախսը կազմել է 172.2 մլն կՎտ ժ կամ 8.2 մլրդ դրամ՝ 2021 թվականի 170.2 մլն կՎտ ժ՝ 7.1 մլրդ դրամի դիմաց կամ ավել է ծախսվել 2.0 մլն կՎտ ժ կամ 1.1 մլրդ. դրամ: Համակարգի էլեկտրաէներգիայի գերծախսի 1.4 մլրդ դրամը մեծամասամբ պայմանավորված է էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ:

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ հաշվետվության համաձայն ապահովվել է ջրի որակի համապատասխանությունը գործող ստանդարտներին և ջրի որակի համապատասխանությունը սանիտարական նորմերի (մանրէաբանական վերլուծություն անցած ջրի որակի պահանջներին համապատասխանող նմուշների տոկոսը) պահանջների կազմել է 98.4 %:

4. 2022 թվականի ընթացքում «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում ջրամատակարարման միջին կշռային տևողությունը՝ Երևան քաղաքում եղել է 23.2 ժամ/օր, այլ քաղաքային համայնքներում 20.6 ժամ/օր, իսկ գյուղական տարածքներում 20.2 ժամ/օր:

5. Շարունակվել է բարելավվել հաշվառման համակարգը խմելու ջուր մատակարարող կազմակերպության սպասարկման տարածքում ջրաչափությունը 2022 թվականին կազմում է 99.77%, նախորդ տարվա 99.7% համեմատ:

6. 2022 թվականի հունիսի 2-ին ընդունվել է «Ոռոգման նպատակով 2022 թվականին Սևանա լճից ջրառի մասին» ՀՀ կառավարության N 782-Ա որոշումը, որով ոռոգման նպատակով Սևանա լճից 2022 թվականի ջրառի չափաքանակը սահմանվել է մինչև 170.0 մլն խոր.մ:

2022 թվականի հունիսի 3-ից մինչև հոկտեմբերի 27-ը Սևանա լճից ոռոգման նպատակով բաց է թողնվել 165.1 մլն խոր.մ ջուր, նախորդ տարվա ոռոգման շրջանում բաց է թողնվել 227.7 մլն խոր.մ ջուր, կամ պակաս է բաց թողնվել շուրջ 62.6 մլն խոր.մ ջուր: Արփա-Սևան թունելով 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Սևանա լիճ է տեղափոխվել շուրջ 168.6 մլն խոր.մ ջուր, 2021 թվականին՝ 157.5 մլն խոր.մ դիմաց կամ ավել է տեղափոխվել շուրջ 11.1 մլն խոր.մ ջուր: Սևանա լճի մակարդակը 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 1900.28 մ, նախորդ տարվա նույն օրվա դրությամբ եղել է 1900.43 մ: Նախորդ տարվա համեմատ Սևանա լճի մակարդակը իջել է 15 սմ-ով:

7. «Որոտան-Արփա-Սևան թունելի ջրային համակարգի կառավարում» ծրագրի «Արփա-Սևան թունելի հավատարմագրային կառավարում» միջոցառմամբ 2022 թվականին հատկացվել է 205.8 մլն դրամ:

«Արփա-Սևան ջրային համակարգի տեխնիկական վիճակի բարելավում» միջոցառմամբ, շինարարական աշխատանքների իրականացման համար կապալառուի հետ կնքվել է պայմանագիր: Նախագծով նախատեսված շուրջ 220 մ ընդհանուր երկարությամբ վթարային հատվածներից վերանորոգվել են շուրջ 114 մ ընդհանուր երկարությամբ հատվածներ 1,037.4 մլն դրամ շրջանակներում: Աշխատանքները կշարունակվեն 2023 թվականին:

ՀՀ կառավարության 2022 թվականի մարտի 10-ի N 309-Ն որոշմամբ 79.9 մլն դրամ է հատկացվել Արփա-Սևան ջրատարի փականային և ջրաչափական հանգույցների վերազինման և արդիականացման համար: Աշխատանքներն ավարտվել են:

8. Ջրամբարաշինության և ենթակառուցվածքների արդիականացման ծրագրերի շրջանակներում իրականացվել են համապատասխան աշխատանքներ, այդ թվում.

8.1 Վեդու ջրամբարը կառուցվում է ՀՀ Արարատի մարզում՝ Վեդի գետի աջափնյա Կոտուց սելավատարի վրա, ջրամբարը լցնելու համար ջրաղբյուր են հանդիսանում Վեդի և Խոսրով գետերը: 2017 թվականի մարտ ամսին տրվել է Վեդու ջրամբարի պատվարի շինարարական աշխատանքների մեկնարկը: Վեդու ջրամբարի պատվարի և օժանդակ կառուցվածքների կառուցման շրջանակներում կառուցված է հիմնական պատվարի շուրջ 69 մետր (ընդհանուր 85մ) բարձրությամբ հատվածը: Ավարտվել են ջրի փոխադրող համակարգի (ընդհանուր 11 կմ) և Վեդի ու Խոսրով գետերի վրա երկու ջրառ հանգույցների շինարարական աշխատանքները: Վեդու ջրամբարի և Վեդի գետի իշխման տակ գտնվող շուրջ 4000 հա հողատարածքների ներտնտեսային ոռոգման ցանցի մանրամասն նախագծանախահաշվային փաստաթղթերն ամբողջությամբ մշակված են: Վեդի ջրամբարի և Վեդի գետի իշխման տակ գտնվող փորձնական հողատարածքներում ոռոգման ներտնտեսային ցանցի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի լրամշակումը գտնվում է ավարտական փուլում: Շինարարական աշխատանքները կմեկնարկեն 2023 թվականին:

8.2 Կապսի կիսակառույց ջրամբարը գտնվում է ՀՀ Շիրակի մարզում՝ Գյումրի քաղաքից դեպի հյուսիս 22 կմ հեռավորության վրա գտնվող Ախուրյանի գետահովտում:

2022 թվականի հունվարի 24-ին տեղի է ունեցել «Կապսի ջրամբարի և օժանդակ կառուցվածքների կառուցում» մրցույթի շրջանակներում ներկայացված առաջարկների բացումը: Գնահատման փուլն ավարտվել է և դեկտեմբերի 6-ից 8-ը տեղի են ունեցել պայմանագրային բանակցությունները: Ներկայումս ընթանում են պայմանագրի շնորհման և կնքման գործընթացները:

ՀՁՎԳՊ-ի դրույթների կատարման շրջանակում Իրականացման խորհրդատուն (ԻԽ) իրականացրել է ազդակիր անձանց սեփականության իրավունքի գրանցում, ժառանգության գործերին ձևակերպմանը և ազդակիր տարածքներում նախատեսվող/գործող ՓՀԷԿ-երի մասով փոխհատուցման գործընթացի նախապատրաստմանն առնչվող աշխատանքներ:

2022 թվականի նոյեմբերի 11-ից մեկնարկել է ՀՁՎԳՊ-ով նախատեսված «Փոխհատուցման և օժանդակությունների տրամադրման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման հանձնաժողովի» գործունեությունը:

Մշակվել են ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի Նոր Ջրաձոր բնակավայրի կառուցապատման համար նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթները՝ Ջրաձոր բնակավայրի գլխավոր հատակագծի, գոտևորման նախագծերը և քաղաքաշինական կանոնադրությունը: Ներկայացվել է վերջիներիս փորձաքննության դրական եզրակացությունը:

8.3 Փոքր և միջին ջրամբարաշինություն ծրագրում ներառված 15 ջրամբարներից՝ չորս ջրամբարների՝ Աստղաձորի, Արգիճիի, Ելփինի, Քասախի մասով նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները մեկնարկված են: Երկու ջրամբարների՝ Լիճքի և Արթիկի մասով հայտարարվել է նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման կրկնակի մրցույթ: Հինգ ջրամբարների՝ Խնձորուտի, Վերնաշենի, Գետիկվանքի, Հախում-2-ի, Կողբի մասով մեկնարկվել են տեխնիկատնտեսական հիմնավորման նախապատրաստական աշխատանքները: Չորս ջրամբարների՝ Խնձորեսկի, Ձիրակի, Խաչիկի, Սելավ-Մաստարայի մասով քննարկվում են ջրամբարների կառուցման իրականացվելիության հարցերը՝ պայմանավորված սահմանային կամ ջրապահովվածության խնդիրներով:

8.4 Օրվա կարգավորման թվով 31 ջրավազանների կառուցման և վերակառուցման համար, Ջրային կոմիտեի հետ կնքված համապատասխան պայմանագրերի շրջանակներում խորհրդատուների կողմից իրականացվում են նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ:

8.5 «Ոռոգման համակարգերի զարգացման» ծրագրի շրջանակներում՝ «Երկրորդ կարգի ջրանցքների վերականգնում» ենթաբաղադրիչով նախատեսվում է վերականգնել 22 միջտնտեսային ջրանցքների 55.95 կմ ընդհանուր երկարությամբ առավել քայքայված հատվածներ: 2022 թվականի ընթացքում վերականգնվել են միջտնտեսային ջրանցքների 22.44 կմ երկարությամբ հատվածներ: «Ներտնտեսային ոռոգման համակարգերի վերականգնում» բաղադրիչով նախատեսվել է 105 բնակավայրերում հիմնանորոգել 265,9 կմ ընդհանուր երկարությամբ ներտնտեսային նշանակության ջրանցքներ: Աշխատանքները հիմնականում ավարտված են (համակարգերը շահագործվում են), բացառությամբ Մեծամոր համայնքի՝ սահմանային ուղեկալի ներսում գտնվող Բերքաշատ բնակավայրի ներտնտեսային ցանցի շինարարական աշխատանքների: 2022 թվականի ընթացքում հիմնանորոգվել են 33,67 կմ ներտնտեսային ջրանցքներ: 2022 թվականի սեպտեմբերից մեկնարկել են շուրջ 65,8 կմ ընդհանուր երկարությամբ երկրորդ կարգի 27 ջրանցքների և շուրջ 16,1 կմ ընդհանուր երկարությամբ ներտնտեսային ոռոգման 3 համակարգերի վերականգնման/կառուցման լրացուցիչ աշխատանքներ: 2022 թվականին

վերականգնվել են երկրորդ կարգի ջրանցքների 6,4 կմ ընդհանուր երկարությամբ հատվածներ:

8.6 Ոռոգման համակարգերի վերականգնմանն ուղղված աշխատանքների համար 2022 թվականին ՀՀ պետական բյուջեով հատկացվել է 591,1 մլն դրամ գումար, որով նախատեսվել էր թվով 6 ոռոգման համակարգերի հիմնանորոգումը:

Շինարարական աշխատանքներից երկուսը ավարտվել են՝ «Թալինի ձախ ճյուղի 7-րդ բաժանարարի 5-րդ վերականգնվող հատված» աշխատանքի շրջանակներում կառուցվել է 2877 գծ.մ ջրանցք և «Քաղցրաշեն-2 պոմպակայանի մղման խողովակաշարի կառուցում» աշխատանքի շրջանակներում կառուցվել է 1352 գծ.մ երկարությամբ խողովակաշար:

«Երևան» ջրօգտագործողների ընկերության կողմից սպասարկվող Մասիսի տարածաշրջանի Դաշտավան, Նորամարգ, Դարբնիկ, Մասիս, Ջորակ, Սիս և Սայաթ-Նովա համայնքների ինքնաշատրվանող խորքային հորերի բաժանարար կետերի կահավորումը փականներով և ջրաչափերով» աշխատանքը մեկնարկել է 2022թ. նոյեմբերին և կավարտվի 2023 թվականի առաջին եռամսյակում:

Երեք աշխատանքների՝ «Արմաշ պոմպակայանի 4-րդ գոտու հեռացնող ջրատարի վերականգնում», «Սուրենավան 3-րդ գոտու ջրագծի հիմնանորոգման աշխատանքներ», «ՀՀ Սյունիքի մարզի Որոտանի մայր ջրանցքի Հարթաշենի դյուկերի թվարված հատվածի վերականգնման աշխատանքներ» իրականացումը մրցույթներին մասնակից չլինելու պատճառով տեղափոխվել է 2023 թվական:

8.7 Կոլեկտորադրենաժային ցանցի մաքրում և ընթացիկ նորոգում, կոլեկտորադրենաժային ցանցի պահպանում և շահագործում, գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշման նպատակով իրականացվել են՝ 197.93 կմ ընդհանուր երկարությամբ կոլեկտորադրենաժային ցանցի մաքրման, վերականգնման և նորոգման աշխատանքներ: Արարատյան դաշտում տեղադրված 450 դիտողական հորատանցքներում գրունտային ջրերի մշտական դիտարկումներ:

9. «2022 թվականին նախատեսված հակահեղեղային առաջնահերթ 10 միջոցառումներից բոլոր աշխատանքները մեկնարկել են: Ավարտվել և շահագործման են հանձնվել՝ «Մեծամորի հեղեղատարի հունի մաքրում մոտ 1000մ և ափապատնեշի բարձրացում մոտ 150մ երկարությամբ», «Գավառագետի հունի մաքրում մոտ 4200 մ», «Որոտան գետի հունի մաքրում Սիսիան քաղաքի կենտրոնական կամրջից վերև և ներքև մոտ 1400 մ հատվածում», «Երվանդաշատ համայնքի Արաքս գետի ափապաշտպան արգելաթմբի բարձրացում», «Մեծամոր գետի ափապատնեշի մոտ 800մ հատվածի բարձրացման», «Այգեձորի մայր ջրանցքին զուգահեռ հենապատի ամրացում մոտ 70մ երկարությամբ», «Տանձուտ և Փամբակ գետերի ափապաշտպան հենապատերի վերականգնում մոտ 600մ երկարությամբ հատվածում» աշխատանքները: